Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԿՈՏՈԼՅԱՆԻ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԼԻԱՆՆԱ ԱՆԱՆՅԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՑ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ը ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՖՈՒՋԵՅՐԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Կոտոլյան Արմեն - Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ ՇՎՏՄ) ղեկավար,

Լիաննա Անանյան – ՇՎՏՄ-ի փորձագետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Արաբական Միացյալ Էմիրություններ, Ֆուջեյրա քաղաք, 2025թ. հոկտեմբերի 27-ից մինչև ս.թ.նոյեմբերի 2-ը ներառյալ:

3.Հրավիրող կողմը.

Ֆուջեյրայի քաղաքապետարան, Ֆուջեյրա քաղաքի քաղաքապետարանի գլխավոր տնօրեն՝ Մուհամեդ Սայֆ Ալաֆիամի հրավերով:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել 2025 թվականի հոկտեմբերի 28-30-ը Նորին Մեծություն Շեյխ Համադ բին Մոհամմեդ Ալ Շարկիի՝ Բարձրագույն խորհրդի անդամի և Ֆուջեյրայի Էմիրության կառավարիչի հովանավորությամբ կայանալիք 10-րդ Ֆուջեյրայի միջազգային հանքարդյունաբերական համաժողովին, ինչպես նաև մասնակցել Ֆուջեյրայի քաղաքապետարանի շուկայի վերահսկողությյան վարչության աշխատակիցների հետ քննարկմանը՝ նպատակ ունենալով շարունակել 2024թ. ՇՎՏՄ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած հանդիպման արդյունքների հետագա զարգացումները:

5. Քննարկված թեմաները.

10-րդ Ֆուջեյրայի Միջազգային Հանքարդյունաբերական համաժողովը ներառել է թեմաներ միջազգային համագործակցության, հանքարդյունաբերության

կայուն զարգացման, նորարարությունների, ներդրումային հնարավորությունների և մարդկային կարողությունների զարգացման վերաբերյալ:

Ֆուջեյրայի քաղաքապետարանում քննարկված թեմաներն էին՝

- Արհեստական բանականության դերը ոչ պարենային ապրանքների վերահսկողության ոլորտում:
- Օնլայն առևտրի վերահսկողության մարտահրավերները վերահսկողական գործառույթներ իրականացնող մարմինների համար:
- ՄԱԿ ԵՏՀ Շուկայի վերահսկողության աշխատանքային խմբին միանալու հեռանկարներն ու հնարավորությունները (MARS, UNECE, WP.6):
- Ֆուջեյրա քաղաքի և ՀՀ քաղաքներից մեկի միջև քույր-քաղաք ճանաչելու վերաբերյալ քննարկում:
- Ներկայացվեցին ՇՎՏՄ-ի կողմից ձեռք բերված հաջողությունները, ապագա պլանները նախորդ 2024թ. հանդիպում քննարկումից հետո:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՇՎՏՄ-ի ներկայացուցիչները մասնակցել են Ֆուջեյրայի քաղաքապետարանում կայացած հատուկ հանդիպում-քննարկմանը, որտեղ ներկա էին վարչության տարբեր ղեկավարներ:

Նախքան հանդիպման մեկնարկը, ՇՎՏՄ-ի ղեկավար Արմեն Կոտոլյանը ողջունեց ներկաներին, որից հետո ներկայացվեց իրականացված փոփոխությունները նախորդ տարվա հանդիպումից հետո:

Փոխադարձ հնչեցին տարբեր հարցեր երկու երկրների շուկայի վերահսկողության իրականացման գործընթացների, ինչպես նաև մարտահրավերների վերաբերյալ:

Երկկողմ կարևորվեց շարունակել 2024թ. հոկտեմբերի 29-ին ֆուջեյրա քաղաքի քաղաքապետարնում ձեռք բերված պայմանավորվածությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ձեռք է բերվել պայմանավորվածություն հետագա համագործակցության, Ֆուջեյրայի քաղաապետարանի հետ կապերի ամրապնդման, ինչպես նաև՝ հետագա փոխադարձ շարունակական այցեր իրականացնելու վերաբերյալ: Կողմերն ընդգծեցին գիտելիքների և փորձի փոխանակման, միջազգային համագործակցության կարևորությունը ստուգումների արդյունավետության բարձրացման գործում:

Փաստաթուղթ չի ստորագրվել:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջիկայում սկսել աշխատաքներ Ֆուջեյրա քաղաքի և ՀՀ քաղաքներից մեկի հետ քույր-քաղաք ճանաչելու գործընթացը:

ՇՎՏՄ ներկայացուցիչ Լիաննա Անանյանը՝ հանդիսանալով ՄԱԿ ԵՏՀ շուկայի վերահսկողության աշխատանքային խմբի փոխնախագահ, հայտնեց պատրաստակամություն աջակցելու գործընկերներին՝ դառնալու աշխատանքային խմբի անդամ:

Ձեռք բերված պայմանավորվածությունների ընթացքը կհամակարգվի ՇՎՏՄ-ի կողմից:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

03.11.2025թ.